

ինչպէս տեսնեմք, անցեալ դարերու մէջ գրեմուած իւրաքանչիւր մասեան ունեցած է գրաբար ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ մը որուն մէջ հեղինակ, գրչագիր եւ յանախ սպագրիչ՝ յարաբերական ծանօթագրութիւններ մը կցկցած են: Ասոնց ամենուն պատմութիւնը խտացուող ներկայ հասարիս համար՝ ոչինչ այնքան պատշաճ էր քան զնեղուցի մեծ օրինակ Յիւստակարանի մը. դարձեալ զորոց բարբառով շարադրուած, — բէ՛ր իբր ճորհակալիք երկասիրութեան օժանդակողներու եւ բէ մասնաւոր իբր վերջիւում՝ Հայոց սպարանական աշխարհի այդ վաղնջուց սովորութեան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԴՐՈՇԱՐԱՆ ԱՆՄԵՆԱԻՍ

Աստ առնու դադար փորձն իմ արկանելոյ ակն յաշխատութիւնս եւ ի վաստակս այնչափ հարիրաւորաց Հայոց, որ հասարակ ձեռնամուխ եղեն ի հոյակապ արուեստ Գուտներերգի: Բանասերք՝ որոց միանգամ զփորձ առեալ իցէ այնպիսի ծանրատաղտուկ եւ երկայնածիղ աշխատութեան՝ դիւրաւ իմն ի միտ առնուցուն բէ որպիսի՝ դժուարին ավախալք եւ առապարք պատանցեցին ինձ, ընդ որս անցի մեծաւ ճգամբ, առանց ամենեւին խտորելոյ կամ զարտուղի ի ճանապարհես, որ առաջիս կայր, անկանելոյ եւ կամ բէ ուրեք երբեք ոտանելոյ, սարսուցեալ ի մանուածապատ երկայնութիւնէ նորա. եւ ի դեզերանս իմ ի տպարանական աշխարհին՝ ուշ ի կուրծս գննեալ եւ քննեալ զամենայն, որ միանգամ շուրջ գանձամբ իրք էին, ըստ կարի որչափ բէ հնար՝ ջանացայ հանել ճշգրտիւ ի նկարու գիին եւ զնոր աշխարհս, զվայրս, զանձինս, զդէպս եւ զժամանակս:

Այլ արդ, յորժամ ջնջեմ զքիրտն իմ ի ճակատուէ, առնեմ վաղվազակի մուտացուն վաստակոց իմոց եւ տքնութեանց, ընդ այն եւեթ ցնծացեալ զի վաստակս իմ «Տիպ ու տառ» ի համառօտ էսս իւր շողացուցանէ իբրեւ ի հայելոջ բէ ո՛չ լի եւ լի՝ սակայն գոնեայ կարճառօտիւք զպատմութիւն երկանց ամենայն մտաւորականաց մերոց:

Պարտ անձին համարիմ յիշատակել աստեւն յանկեղծաւոր սրտէ զամուսին իմ **ԳԱՐՇԱԿՈՒՆԻ**, որ ի պատրաստութեան անդ մատենիս բազում վաստակս եցոյց ինձ եւ քաջակերեալ զօրացոյց զիս մինչեւ ցվախճանել զործոյս եւ ամ ի հանդիսի անվաստակ իմն ջան եւ փոյք, շրջեալ ընդ արուարձանս քաղաքիս, առ ի հայրաքել գտանել զյուսանկարս Հայոց Կոտանդնուպոլսեցոց վաղուց աննետ եղելոց, պատրաստեալ եւ զատուերագիրս վարուց նոցին:

Ձէ մարք բողոյ առանց յիշատակի եւ զպուշտն **Հրանտ Դազարեանց**, որոյ լեալ մեզ դրացի, ուղղեալ յարդարեաց խնամով զամենայն զփորձս տպագրութեան մատենիս:

Այլ եւ զբաժին աշխատութեան իւրեանց մատուցին ինձ, ըստ ջափու ոմն առաւել եւ ոմն նուազ.

Մաղաքիա արեւպ. Օրմանեան, **Հ. Արսէն Դազիկեան**, Հարք Վիեննական ուխտին՝ **Գաճրանեան**, **Մէլեկիբեան** եւ **Կէտիկեան**, ի Միւրանութիւնէ հարց Անտոնեանց՝ **Հ. Օրապեան**, **Մեսրոպ Վ. Եւանեան**՝ մատենադարանապետ վանուց Երուսաղէմի, Օր. Մարի՝ դուստր երեւելոյ ձուլչի տառից Յովնանու Միլենտիսեան, բանասեր **Հրանտ Ասատուր**, զբաժնառ. **Վ. Մարգարեան**, **Վ. Եւ Պ. Զարգարեան եղբարք**, հնամի գրաշարապետ՝ **Ե. Պարոնեան**, այլովքն հանդերձ:

Ի վեր քան զամենայն շնորհակալու միտս ունել պարտիմ **Վ. Եւ Հ. ՏԷՐ-ՆՍՐՈՒՍԵԱՆ ԵՂՍԱՐՔ**, որ յանձն առին ի բազում դէպս գոնել զշան օգտի իւրեանց, առ ի հասուցանել ի զեղարուեստական կատար բարձրութեան զայսպիսի մեծագին եւ դժուարին տպագրութիւն, որպիսի է «Տիպ ու տառ» իմ, եւ այն՝ ի պատիւ մեծի տօնին եւեթ, որ անուանեալ կոչի Չորեքդարեան Յորելեան վաստակոց համօրէն Հայկական Մամուլ:

Մեծազոյն մասն գունակ գունակ նկարատիպ պատկերացն՝ յարդարեալ պատրաստեցաւ ի ծանօթական տան Graphische Union կոչեցելոյ, որ ի Վիեննա մայրաքաղաքի: Գրաշարապետ տպարանիս է **Վահան Տէօպիլեան**, շարող մատենիս եղև **Տիպիլեան Յակոբ**, տպանար **Խաչիկ Զաւաբեան**, կազմարար **Արամ Սարաճեան**: Ի դէպ է առնել յիշատակաց արժանի եւ զգործաւորս տպարանիս, որոց անուանք կարգին յատեն. — Վարդան Բրբբեան, Հայկ Գալիպեան, Տիրան Մուրաֆեան եւ Մինաս Պէրպերեան:

Թ Ե Ո Ղ Ի Կ

ԹՈՒՐԿԻՅՑ բաժինին վրայ յաւելլի է Կ Պօլսոյ Հոռով. Հայոց ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ սպարանք, (տառերը Վիեննայի Միլիթարեաններէ հայրապառած), ուրիշ յոյս ընծայուած գիրքերէն յիշենք **Ահար արքի վէ ահար ճէփս Տիրապալարբեան եփեայլի (1869)**: